բութեան Սրբազնագոյն Հայրապետի, զորոյ նկարագիրը հաղորդած է Հ. Ամախուոյ մեր Երգոյ Թղթակիցը, զոր և ստորև կ՝հրատարակեմք ըստ խնդրանացն։

Նոյնպէս նաև Երցախու (Ղարաբաղ) Վիճակին Փոխանորդ Երժանապատիւ Յովակիմ Վարդապետին յայտարարութենէն կիմանամք, որ Հուշի Վանքի Սուրբ Եկեղեցեաց մէջ Փրկարար Սուրբ Պատարագը մատուցանելէն յետոյ, եկեղեցականաց և աշխարհականաց խուռն բազմութիւն դիմած է տեղւոյն Առաջնորդարանը, և միաբերան ցնծութեամբ շնորհաւորած են Տէր Վահրամ Հայրապետին Ընուան մեծահանդէս ծնունդը։ Նոյն միջոցին կարդացած են բարեմաղթողական երկու ճառեր, մին Հայերէն հանդերձ Ռուսերէն թարգմանութեամբ ընթերցած է Հուշուոյ Եկեղեցեաց բարեկարգ Աւագ քահանայ Կարապետ Հախիեանցը, իսկ միւսը սոսկ Հայերէն՝ Հոգևոր դպրոցին Կրօնուսոյց Գրիգոր Աւագ Վահանայն տէր Աւագեանց։

Այս հանդիսին ներկայ եղած են Գանձակի Վ. սեմ. Դահանդապետը, Հուշուոյ Գաւառապետը և քաղաքական տեսչութեան գլխաւոր ասպիճանաւորքն։

Հարատաց էջից անձկութիւնը չը նեղելով ընթերցեալ ճառերը՝ ի լոյս ընձայել, միայն արժանը կը համարիմք մէջ բերել Կարապետ Աւագ Վահանային ճառէն մի քանի իրաւացի խօսքեր՝ ցուցանելոյ համար, թէ՝ որպիսի՞ ուրախութիւններով կը լեցուին Աղգասէր սրտերը Վ. Հայրապետ Կաթողիկոսին ազգաշահ ձեռնարկութեանց առթիւ։

Ահա այն խօսքերը։

«Հայր Կաթողիկոս մեր հանապազ նը-վիրեալ է զանոյն դիտոյն հաստատակամ բարեսիրութեամբ հաստատեալ ինքեան Հօրին։

Ի կարճ դիտոյն Հովհաննէս-Մելիք է, նա արդէն ակնեալ է վերանորոգել բարեկարգութիւնք զՀոգեւոր Դպրոցս, դարձեալ զմտադրութիւնն՝ ի պայծառութիւն որդւոց արժանաւորաց Եկեղեցւոյ առ ամրութիւն և ի վերականգնումն նախնի վանօրէից և՝ ի բարեկարգութիւն Հոգեւորականութիւն»։

Որչափ իրաւացի լինելը այս խօսքերուն մեք չկամիմք երկարաբանել, միայն սա կասեմք, որ Վ. Հայրապետ Կաթուղիկոսը դպրոցաց համար կանոններ հրատարակեց, և շրջաբերականներով առ ամենայն թեմական Առաջնորդս վիճակաց յղելով, կը յուսայ որ կարճ ժամանակի մէջ բարեբաղեն մեր ազգային- հոգևոր դպրոցները, և շատ գիւղից մէջ՝ յորս մեծ կարօտութիւն կայ Դպրոցաց, հոգևորականաց քարոզութեամբ և յորդորանօք և մեր Հայազգի բարեպաշտ ժողովրդականաց սիրալեր գործակցութեամբ նորանոր Դպրոցներ բացուին, որ միակ և դիակ աղբիւր կը համարուին մեր ապագայ լուսաւորութեան և բարօրութեան։

...Խմբագրութեան Բարեբաղ ամառգրոյ

Կարծիք չկայ, որ՝ մի յիշատակաց արժանի գործ եթէ մեռացութեան փոշու տակ երկար տարիներով անյիշողապէս մնալու լինի, միայն յանձնուելով ժամանակի բերմունքին, այնպիսին օրէ-օր կ՝մոռնուի բարեկարգ մակերևոյթից, որով և կ՝ցուցանէ անհետանալու հեռանքը. նոյնպէս էլ և յիշատակաց արժանի առնելով նոյնպիսին, մամուռը և փոշին փոտահութիւն չեն ունենալ իրանց ծածկոյթը տարածանելու այնպիսոյն վրայ. ուստի կ՝մնայ և նորա մակերևոյթը փայլուն տեսութեան մէջ, ինքն էլ

յարգելի։ Եւ յիրաւի, եթէ մեր նախնեաց յիշատակները և փառաւոր անուններն մինչև ցայսօր արձագանք ունին մերայիններին ականջում, տարէց տարի բարեջանների միջնորդութեամբ կրկնուելովն է արժանաւոր յիշատակութեամբ։ Եթէ նախնեաց յիշատակները՝ որոնք արդէն իբր էական կերպով են նշմարվում, քաղցր են յիշվելու, և անմոռաց պահուելու մեր մէջ, ապա որքան առաւել ներկայումս եղածի անուան յիշատակը, որ այժմեայ դարու պահանջման համեմատ յառաջադիմութեան ընթացքներ կ'սիրէ, պիտի յարգած, իսրախուսական գաղափարներ մատուցանելով նորան։

Ս. յապիսի մի սուրբ զգացմունքով տեղւոյս Ս. Ընդրէաս Առաջնորդն սեպտեմբեր ամսոյ 27-ին առաքինի Նահատակաց արժանաւոր տօնը կատարելուց յետոյ, և զինի երեկոյեան ժամասացութեան սկսեց կատարել փառաւոր հանդիսով Ներկայ Հայրապետի ամենայն Հայոց Տեառն Գէորգայ Գ.ի անուան քաղցր յիշատակը. որով նախագուշակվում էր, թէ Ս. Հայրը կամի ցոյց տալ Բարեսիրտ Հայրապետի գորովը և օժանդակութիւնը դէպի իւր հարազատ զաւակունքը, և զաւակաց սիրոյ և յարգական ձգտողութիւնը դէպի Նա։

Պատշաճի շարականները և Աղգային երգերը աւարտելուց յետոյ՝ որոնցով հենց գիտենաս ժողովրդեան ուշադրութիւնները գրաւված՝ պիտի սփոփվէին նոցա տխուր սրտերը, իսկոյն Շնորհունակ առաջ Սարկաւագ Բաղդասարն Մանուկեան Բաղդասարեանց դարձնելով իւր դէմքը դէպի ժողովուրդը՝ կարդաց մէկ աղգու ճառ, որն որ նախնեաց դարը և նոցա գործունէութեան ասպարիզի մի մասը ներկայացրելով և այժմեայ դարու պահանջը կ'յարգէր։ Ապա այս պաշտելի հանդէսը պատկող Ս. Հայրը բատամենայնի թարգման հանդիսացաւ իւր խմաստալից ատենաբանութեամբը, որով այն, և ողջունած Հայրապետի ցանկութիւնը Աղգի յառաջադիմութեան համար և հարազատ որդւոց անհրաժեշտ պարտականութիւնները դէպի Նա, դէպի Եկեղեցին և դէպի Աղգութիւնը գեղեցկապէս բացատրելուց զինի՝ ուսման եռանդը և ճշմարիտ սէրը կ'քարոզէր դէպի ուսումնարանը, խրախուսելով նոցա տխրութիւնով վհատուած սրտերը։ Յարմար և աղգու ատենաբանութեանը կամենալով վերջ տալ, բարեմաղթեց Օգոստափառ Կայսեր և Արքայազնոյն Հայրապետի կենաց և մեր վերայ նոցա քաղցր աչքով հովանաւորութեան համար։

Ս. յապիսի բարեբանութիւնով արձակեց ժողովրդեան եկեղեցուց։

Ս. այս հանդիսի համառօտ նկարագրութիւնը մատուցանելով Խմբագրութեանդ Էջ. Ամագրոյն վերոյիշեալ ճառի հետ՝ կ'յուսանք, որ փոքր մի տեղի կ'շնորհէք և սորան 'ի վայելս յարգոյ ընթերցողաց։

Յովհաննէս Մէրպաբեկեան։

Ի 14։ Հոկտեմբերի 1869 թ.

'ի Շամախի

Վ. Եհատիա Կաթուղիկոսին 'ի Ուսասան 67 թուականին ճանապարհորդութեան մէջ ինչպէս ուրիշ քաղաքները, նոյն պէս 'ի Նոր Նախիջևան հրամայած և հաստատած Դպրոցաց մին լինելով Ս. Համբարձման Եկեղեցւոյ թաղական հոգևոր դպրոցը, անցեալները այնպէս՝ ներկայ տարւոյս յուլիս 2-ին 'ի ներկայութեան Կառավարչի թեմին Ն. Նախիջևանայ և Պետարապիայ

Գերապատիւ Գէորգ Ս. Երք Եպիսկոպոսի՝ յիշեալ դպրոցին մի և կէս տարիէ հետ 60 աշակերտաց ուսանող քննութիւնը կատարելով՝ Հոգաբարձութիւնը յատուկ յայտարարութեամբ ներկայացուցած է առ Վեհափառ Կաթուղիկոսն՝ քննութեանց արդիւնքը, որ բերկրաւէտ և միանդամայն շնորհակալեաց արժանի է։

Այս առթիւ վերոյիշեալ քաղաքին Ս. Համբարձման Եկեղեցւոյ ժողովրդականք մեծաւ երախտագիտութեամբ պարզելով իւրեանց սրտից զգացմանց հաւատիքը առ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն, նա և շնորհակալութիւն մատուցած են յիշեալ դպրոցին Հոգաբարձութեան և դասատուին Աղգասէր և բարենպատակ Ջանից համար։ Հաւատիկ ժողովրդականաց 15 անձանց ստորագրութեամբ՝ գրութիւնը։

ՆՈՐԻՆ Վ. ԵՀԱՓԱՌՈՒԹԵՆՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Ի ժողովրդականաց Ս. Համբարձման Եկեղեցւոյն Նոր-Նախիջեւանի.

Ամենախոնարհ Յայտարարութիւն.

Ի շնորհաբեր այցելութեանն Վեհափառ Հօրդ մերոյ յամին 1867, ի քաղաք այսր, 'ի մէջ այլոց բարեկարգ անօրէնութեանց բարեհաճեալ էին Հայրապետական Սուրբ կամք Ձեր հրամայել՝ զն բացցին առ իւրաքանչիւր Եկեղեցիս ծխական Դպրոցք՝ որոց կարօտ էր քաղաքս մեր 'ի հերուն հետէ։

Հպաշտելին և զամենապատուական առաջադրութիւն Վեհափառութեանդ ունելով ի նկատի և տեսանելով զայժ կարեւորութիւն այնորիկ երեցփոխան մեր մեծարոյ Պետրոսն, Խոսրովեանց փութացաւ յառաջ քան զամենեսին ի կատար ածել զայն և երաց զծխական Դպրոց յանուն Սուրբ Համբարձման Եկեղեցւոյս 'ի 1-ն Նոյեմբերի 1867 ամի։

Վեհափառ Տէր, աւելորդ է մեզ բացատրել՝ քանի՞ անպատմելի բարեբաղդութեան եղև մեզ՝ Հայրապետական մեծարելի հրամանն Ձեր՝ առթիւ. քանզի աշակերտաք Դպրոցիս զոլով ընդհանրապէս որդիք ամենաթշուառ յետին ազգաստաց, որք հազիւ հազ զօրական ապրուստ իւրեանց գտանեն տաժանական աշխատութեամբ՝ պարտ էին իսպառ մնալ առանց ուսման և բարոյական կրթութեան։

Հարցիս աշակերտաք Դպրոցիս են 60-ուսանելն զհետագայ առարկայս. զՀայերէն ընթերցանութիւն անապրթաք, Քրիստոնէական վարդապետութիւն յօրինեալն 'ի Մեծայ վարժապետէ և զսուրբ գրոց պատմութիւն Եմբրոսիոս վարդապետի, Հայերէն Քերականութիւն Ա. մասն, Ուսերէն ընթերցանութիւն, թուաբանութիւն, և զգեղագրութիւն Հայերէն և Ուսերէն, զորս ուսուցանէ Ջերմեռանդ աշխատասիրութեամբ և ազգասիրական ոգւով Արժանապատիւ Յովհաննէս քահանայն Տէր Գաբրիէլեան։

Դեռքին բարեկարգութիւն Դպրոցիս 'ի 28 յունվարի 1868 ամի յանձնեցաւ ընտրեալ համահաճութեամբ ժողովրդոց և հաստատեալ 'ի Թեմական Առաջնորդէ վեհաշիս Հոգաբարձուաց՝ որք են արժանապատիւ Գէորգ վարդապետն Մարտիրոսեան, Մեծարոյ վաճառականք Պետրոս և Մանուէլ Խոսրովեանք, Ստեփաննոս Զորչոփեան և Խաչատուր Ստեփաննոսեան, որք